

ԱՐՈՒՍԵԱԿ

(Կէս մը փափսալով)

Ի՞նչ զեղեցիկ բարի-երթաս, այնպէս չէ՞ : —
Կտրիճ տէր-իմ, սարսուռ մը դուն չե՞ս ըզզար
Դժնեամեսիլ մահուան հովէն ցրտաշունչ :

U h U

Աղօթքներու չունկնդրեցիր, ո՛ր Պալլաս:

(Տաճարէն վար դարձուած ջահով եւ պսակով՝ հեգադէմ երիտասարդի մը
կերպարանքի տակ, մահուան ոգին կր մօտեմայ Ադամին) :

ԱԴԱՄ

Պալլաս լըսեց քեզի: — Երկինքն օրհնէ՛ քեզ:
Խաղաղութիւն պատեց հոգիս, ո՛րմ Լուկիս:

ԱՐՈՒՍԵԱԿ

Անէ՛ծք քեզի, ցընորական սին աշխարհ,
Գեղեցկադոյն ըռպէս դարձեալ եղծեցիր:

ᄒ ᄒ ᄒ

Անէ՛ծք քեզի, ըստորոզի վատ ամբոխ:
Դաժանօրէն երջանկութեան դուն հրպար,
Իր թարմ ծաղիկն խակոյն գետին թափելով:
Աղատութիւնն քաղցրը պիտի հըլլայ քեզ
Այնքան՝ որքան ինծի եղաւ զաւատանց:

(Tup. 5)

ՀԱՆՐԱՊԵՏ ԲՆԱԳՐԷՆԻ
ԹԱՐԳՄԱՆԵՅ
Հ. Ա. Ֆ.



ՀԱՆԳԻՍՏ

ԶՈՅԳ ՎԱՍՏԱԿԱՆՈՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ



Հ. ՂԵԼՈՆԻՎ ՎՐԴ. ՏԱՅԽԱՆԻ

Մխիթարեան Միարանութիւնը սուզի
արցունքով փակեց 1968 տարին: Երկու
վաստակաւոր Հայրեր, բաժնուեցան յա-
ւէտ մեր բոյնէն:

Մեր միաբանական սուղին մասնակցեցան զանազան բարձրաստիճան եկեղեցականներ, ազգայիններ, բարեկամներ ու ծանոթներ, որոնք իրենց նամակներով, հեռագիրներով ու մանաւանդ աղօթքներով՝ վարդի թերթեր սփռեցին մեր սգաւոր սրտերուն: Շնորհակալութիւն՝ իրենց անկեղծ զգացումներուն համար:

Մեպտեմբերի անոյշ արեւին տակ ծաղիկ կը քաղէինք կանաչ դաշտերէն, երբ

Հ. Ղեկունդ Վրդ. Տալեանի մահուան լու-
րը՝ մեր դէմքին ժպիտն յանկարծ սառե-
ցուց:

Հ. Ղեւոնդ վարդապետ ոչ եւս է:

Երէկ հոս էր մեզի հետ. իր աչքերուն մէջ մանուկի թափանցիկ ժպիտը կը ցոլար: Իր բարութիւնը չափ չունէր. ոչ մէկուն հանդէպ ոխ կը պահէր սրտին մէջ. առաքինութեան բուրաստան մ'էր իր հողին, որուն առաջին ծաղիկը, իր ժպիտն էր մշտատես:

Աստուած օժտած էր զինքը զանազան ձիրքերով, արծաթի պէս հնչուն ձայնով։ Իր երգը աղօթք էր, սրտազերաւ եւ յուզիչ։ Երբ ինքը երգէր, մեր սիրտը արցունքով կը լեցուէր․ ինքը, սակայն, մեղ էր տեսներ այդ պահուն․ աչքերը միշտ խորանին սեւեռած, հրեշտակներուն հետ կ'երգէր։

Աղջիկ ու բարեհամբույր էր ամէնուն հետ, վանքի այցելուներու վրայ մեծ տըպաւորութիւն կը դրոճէր: Իր յիշատակը գանձի պէս թաքուն կը մնայ ամէնուս սրտին մէջ: Թող մեր արցունքը ծաղկի իր հողակոյտին վրայ. երկինքի օրհնութիւնը իջնէ եւ իր աճիւններուն լոյս սըփռէ: Վստահ ենք որ Աստուած իր վաստակաւոր մշակը վարձատրած է արդէն, անանց փառքի յաւիտեանական յոյսով:

Այդ երանական լույսին մէջ մեզ ալ յիշէ, որ Վ լուսահողի վարդապետ, որպէս-զի Մխիթարի այդին անձնանուէր յաջորդներով միշտ ծաղկի. ժպտէ նորէն երկինքէն, որ յանխտ մշակ, որպէս-

դի այս կղզեակի առանձնություններն, լուծված մեջ՝ անպակաս ըլլան մանուշակի նման խոնարհ հողերներ, երկնային տեսլականներով յափշտակուած, կենարարին յիշատակով ճենճերած:

1900ին փոքրիկն Անտոն Հասաւ Ս. Ղազար. սիրեց կղզեակին կեանքը. Մխիթարի դադարաւորականը իր տեսլականը դարձաւ: Երկու տարի ետք, առաւ արդէն փրկունը եւ անհամբեր քահանայութեան սպասեց. 1904ին, ուխտի օրը, իր ուրախութիւնը անբացատրելի էր. այս երկնային ուրախութիւնը իր ամբողջական լրումին հասաւ 1906ին, երբ քահանայ ձեռնադրուեցաւ Ս. Ղազարի մէջ:

Կրօնաւորական ու քահանայական վիճակի զոհողութիւնները ըմբռնող հողի մըն էր. գիտէր որ այդ օր՝ իրեն համար նոր Գողգոթա կը բացուէր:

1911ին մեծաւորները զինքը Հռոմ դըրկեցին, որպէսզի երաժշտական իր բնածին յատկութիւնները զարգացնէ. աշխարհահռչակ վարժապետներու խնամքին յանձնուեցաւ եւ Գրիգորեան երգերու մասնագէտ դարձաւ: Իր երազն էր, սակայն, հայկական շարականներու երգերը եւրոպական խաղաղութեամբ հրատարակել, կորուստէ փրկելու համար հին եղանակները: Շատ մեծ ու ընդարձակ էր այդ ծրագիրը, յանդուգն էր այդ ձեռնարկը. բայց ինքը համեստ կրօնաւոր մըն էր, եւ իր աշխատանքին վարձքը՝ միայն երկինքէն կը սպասէր: Այդ խոնարհութիւնը զինքը դեռ աւելի կը բարձրացնէր եւ դեռ աւելի համակրելի ու սիրելի կը դարձնէր:

Հ. Ղեւոնդ Տայեանի բանասիրական առաջին հատորը լոյս տեսաւ 1911ին. Եղիշէի չորս յեղանակները հնագոյն գրչագրի մը մէջ, ուր հեղինակը համեմատութիւններ կը կատարէ ուրիշ տպագրութիւններու հետ եւ կարեւոր տարբերակները կը մատնանշէ:

1921-1926 խմբագրապետ եղած է Բագմալէպին. հանած է զնահատանքի արժանի բացառիկ թիւեր՝ նուիրուած Նա-

փոլէոն Ա.ի մահուան հարիւրամեակին, Տանթէի մահուան 600ամեակին, Ալիշանի մահուան 25ամեակին, եւ ուրիշ բացառիկ թիւեր:

1930ին Ս. Ղազարի զիւանէն՝ հայկական պատմութիւնը եւ ծէսը լուսարանող հետաքրքրական տեղեկութիւններ հրատարակած է:

1933ին, եւրոպական խաղաղութեամբ հրատարակեց Աւագ Ուրբաթի Համբարձին, Եկայքը, լուրջ ու մանրամասն ուսումնասիրութեամբ, հայերէն ու Ֆրանսերէն լեզուներով: Երաժշտական աշխարհի մէջ իսկապէս նորութիւն բերաւ այդ աշխատանքը. արժէքաւոր էր քառորդ ձայնի մասին կատարած անդրադարձութիւնը եւ դրութիւնը, Սիսթէմ Տայեան անունով ճանչցուած:

Հ. Ղեւոնդ Տայեան իր երաժշտական հմտութիւնը ամփոփած է նաեւ եւրոպական զանազան համայնագիտարաններու մէջ. Enciclopedia Italiana Treccani, Enciclopedia Cattolica, Enciclopedia Musicale Ricordi.

Ստէպ հրաւիրուած է երաժշտական համաժողովներու. իր բանախօսութիւնները եւ կազմակերպած խմբերգները միշտ դրնահատուած են մասնագէտներէ: Եւրոպացիները Հ. Ղեւոնդ Տայեանի միջոցով ճանչցած են յաճախ՝ հայկական երաժշտութիւնը, եւ զմայլած են մեր շարականների զոհարներու վրայ:

Հ. Ղեւոնդ Տայեանի գործերէն յիշենք.

Եկայք Հաւատացեալք, 1933, էջ 28:

Կոմիտաս վարդապետ, 1936, էջ 94:

Մխիթար Արքաւայր Երաժիշտ, 1954, էջ 16:

Եւրոպական խաղաղութեամբ հրատարակեց Հայ Եկեղեցւոյ շարականներէն. Հատոր Դ, Աւագ շաբաթ, 1954, էջ 410: Հատոր Ե, Յիմանց (Զատիկէն Հոգեգալուստ), 1957, էջ 560:

Հատոր Բ, Աստուածածին, Ծնունդ, Յայտնութիւն, 1960, էջ 436:

Հատոր Գ, Մեծ Պահք, 1963, էջ 492:

Հատոր Զ. Հոգեգալուստէն վարդապետ, 1965, էջ 276:

Հատոր Է, Շողակաք-Խաչի տօներ, 1967, էջ 242:

Երգեմք, Ս. Ղեւոնդեանց Համբարձի շաբաթական ստեղծում, 1967:

Հատոր Ը, Սուրբեր, Սուրբերու տօներ, 1969:

Նոյն հատորին պատկանող Մարտիրոսաց շարականները, Հանգստեան հարցերը եւ Խաչի Մանկունքները շուտով լոյս պիտի տեսնեն:

Եղիշէի յեղանակները հնագոյն գրչագրի մը մէջ, 1911, էջ 272:

Յովհ Խոգեւորք Հ. Ալիշանի, 1926, էջ 38:

Մայր դիւան Մխիթարեանց վեցերորդ, 1930, էջ 371:

Համայնապատկեր հարիւրամեայ շրջանի Մխիթարեան դաստիարակներու գործունէութեան, 1937, էջ 48:

Եր. Տէր Կոմիտաս քահանային մարմնոյն հարցը, 1942, էջ 124:

Հ. Ղեւոնդ Տայեանի յանձնուած են զանազան պատասխանատու պաշտօններ եւ առաքելութիւններ: Հայերէնի եւ երգի վարժապետ եղած է Ս. Ղազարի մէջ: Եղած է նաեւ փոխ մեծաւոր վանքի նորընծայարանին եւ ապա մեծաւոր Հռոմի նորընծաներուն: 1923-1926 մեծաւոր կ'ըլլայ Ս. Ղազարի նորընծայարանի, իսկ 1926-1930 մեծաւոր կ'ընտրուի վանքի բարձրագոյն դասի աշակերտութեան: 1935-1946 Ընդհանրական Աթոռակալի պաշտօնը կատարած է վանքին մէջ: Այս շրջանին տարի մը Արեւելք կը մնայ, հայ երգի մասին զանազան բանախօսութիւններ կատարելու համար:

Իր կեանքին վերջին տարիները Ս. Ղազարի մէջ անցուց. նուիրուած էր իր երաժշտական ուսումնասիրութիւններուն:

Կը յուսար շուտով հրատարակել լոյս տեսած հատորներուն առաջինը, որ իր երկար տարիներու աշխատանքին եւ ուսումնասիրութեան զանձերը պիտի պարունակէր. երազ մնաց...:

Յաճախ ինքը կը պտտցնէր Ս. Ղազարի այցելուները. կը բացատրէր Մխիթարեան Հաստատութեան ծրագիրը. կը ծանօթացնէր անոնց հայ ժողովուրդի դրականութիւնը, պատմութիւնը եւ մարտիրոսութիւնը: Եւրոպացիները յուզուած կը մեկնէին Ս. Ղազարէն, անոյշ յիշատակներ տանելով իրենց հետ:

1968ի ամառը՝ օգոստոսի 1-ին համար զիւղ եկաւ...: Վերջին զիւղն էր: Կը սիրէր մեր դաշտին ընդարձակ կանաչութիւնը, թռչուններու երգերը. ստէպ կանգ կ'առնէր ու կը դիտէր մեր պուրակին առուակը, որուն մէջ կարծէք իր մանկութիւնը կը յիշէր:

Գիւղին մէջ, սակայն, իր ամենասիրելի վայրն ունէր. բարձր բլուրի մը վրայ կանգնած Տիրամօր ուխտատեղին էր անիկա: Իրեն համար շատ դժուար էր, զրեթէ անկարելի էր այդ դադար բարձրանալ: Մեղի համար անակնկալ մը եղաւ երբ իմացանք որ նորէն դաւադանը ձեռքին, հեւալով ու քրտնաթոր ելած է այդ ուխտատեղին. իր աղօթքները եւ յողնութիւնը նուիրելէ ետք, վերադարձեր է մեր քով: Նոյն օր իսկապէս շատ յոգնած էր, բայց ուրախ էր: Այս տարի ալ կրցայ ուխտս կատարել, կ'աւետէր մեզի:

Քանի մը օր ետք, Ս. Ղազար վերադարձաւ. նոյն իրիկուն կաթուածն իջաւ իր դիտուն. Սեպտեմբեր 12ին, աչքերը փակեց առ յաւիտ, 84 զարուհներ բոլորելէ ետք:

Հրեշտակներու երգով՝ հանգչէ, ո՛վ սիրելի վարդապետ. հանգի՛ստ աճիւնիդ, յարգա՛նք վաստակիդ:

